



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Հինգշաբթի, 31 Յունուարը տօնն էր հայութեան քրիստոնեական մշակոյթին ու դիմագիծին համար մղուած պատմական ճակատամարտին՝ Ս. Վարդանանց հերոսամարտին, տօն մը, որ աշխարհատարած հայութեան համար ամեն տարի ուխտի ու հաւատարմութեան վերանորոգման օր է:

Այս առիթով, ու Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, առաւօտեան ժամերգութիւն տեղի ունեցաւ մեր բոլոր եկեղեցիներուն մէջ, մասնակցութեամբ Ազգային վարժարաններու աշակերտներու:

Նոյն օրը, երեկոյեան, ի յիշատակ Մամիկոնեան Սպարապետին ու անոր քաջարի զինակիցներուն, հանդիսաւոր Ս. Պատարագ տեղի ունեցաւ Էսսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին: Ներկայ էին ու արարողութեանց մասնակցութիւն բերին մեր Թեմի հոգեւորականաց դասու անդամները:

Ս. Պատարագը մատուցանեց Ազգ. Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Արժ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Պատարագի երգեցողութեան մասնակցութիւն բերին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ երգչախումբին կողքին, շրջանիս եկեղեցիներու դպրաց դասերու անդամներ:

Իր քարոզին մէջ, Հայր Միւռն անդրադարձաւ պատմական այն դէպքերուն, որոնք մեր ժողովուրդը, իր աւագանիով ու բոլոր խաւերով հասցուցին Աւարայրի ճակատամարտին, ապա նաեւ Նուարսակի դաշնագիրով ձեռք բերուած իրաւունքներուն: Հայր Սուրբը յիշեցուց, որ Աւարայրի մէջ մղուած ճակատամարտը կնիք մը դրաւ մեր ժողովուրդի հետագայ դարաւոր պայքարներուն վրայ ու նկատել տուաւ, որ այսօր եւս, տարբեր բնոյթի սակայն նոյն էութեամբ աւարայրներ կը մղուին մեր ժողովուրդին կողմէ, հայրենիքի մէջ թէ սփիւռքեան օճախներուն:

Յաւարտ Ս. Պատարագի, հոգեւորականց դասուն առաջնորդութեամբ ու ներկայ հաւատացեալներուն մասնակցութեամբ, երգուեցան Վարդանանց նահատակներուն նուիրուած երգեր, ինչպա՛ւ նաեւ «Կիլիկիա»ն ու «Մեր Հայրենիք»ը: Ապա, եկեղեցւոյ հոգաբարձութիւնն ու Տիկնանց Միութիւնը կողքի դահլիճին մէջ հիւրասիրեց մասնակիցները:

## **WESTERN PRELACY CELEBRATION OF STS. VARTANANK**

The Feast of Sts. Vartanank, a day of renewal of faith for Armenians around the world, was celebrated on Thursday, January 31<sup>st</sup>, in Prelacy Churches with Divine Liturgy. By the ordinance of the Prelate, morning services took place in all Prelacy Churches with the participation of students from Prelacy Schools.

In the evening, Divine Liturgy was celebrated at Holy Martyrs Church in Encino with the participation of clergy members from various Prelacy Churches. Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian celebrated the Liturgy and delivered the sermon.

Very Rev. Fr. Muron in his sermon reflected on the events leading up to the battle of Avarayr as well as the rights that were secured with the Treaty of Navarsag. He concluded by pointing out that today we are fighting essentially similar battles whether in Armenia or the Diaspora.

At the conclusion of the Liturgy, clergy members collectively sang traditional songs dedicated to Sts. Vartanank, in which parishioners participated, followed by "Giligia" and "Mer Hayrenik". A reception organized by the parish Ladies Auxiliary took place following the service.